

1. Ինեկոբանկ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գևառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գևառաջարկներ **լայնաֆորմատ տպագրության** ծառայությունների վերաբերյալ:
2. Գևառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **08.10.2024, 17:00**

- Էլեկտրոնային տարբերակով՝ [procurement@inecobank.am](mailto:procurement@inecobank.am) Էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը – 08.10.2024/ **լայնաֆորմատ**: Գևառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել „rart տարբերակով, կողավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո [procurement@inecobank.am](mailto:procurement@inecobank.am) Էլ Հասցեով մինչև 09102024թ-ին մինչև ժ. 11:00 :

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ “Ինեկոբանկ” ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝

- **ԳՆՀ կոդը -09102024/ լայնաֆորմատ**
- մասնակցի անվանումը,
- ներկայացման ամսաթիվը,
- ստացող՝ Ինեկոբանկ ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել.

1.Ֆինանսական ծառայություն, Գնումների բաժնի պատասխանատու աշխատակից *Լուիզա Ղազարյան,+37433008896*

2. Մասնագիտական հարցերի համար՝ Ադմինիստրատիվ բաժնի ղեկավար՝ *Էդգար Մխիթարյան,+37496008083*

4. Գևառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ:Այն հանդիսանում է շուկայում առկա գևառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գևառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և ‘Հրապարակային սակարկությունների մասին’ ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գևառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գևառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
  - Գևառաջարկ,
  - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
  - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
  - Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը
  - (ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով):
8. Գևառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գևառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գևառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գևառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գևառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գևառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գևառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գևառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:

14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված գնառաջարկները չեն դիտարկվի:

**ԳՆԱՌԱՋԱՐԿ**

Ինտերբանկ ՓԲԸ **լայնաֆորմատ տպագրության ծառայությունների** մատուցման

գնառաջարկների ներկայացման հարցում

**Ֆայլը՝ կից**

Առաջարկում ենք կատարել մատակարարումը \_\_\_\_\_ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար \_\_\_\_\_ դրամ:

\_\_\_\_\_ Մասնակցի/կազմակերպության անվանումը

\_\_\_\_\_ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

"     " \_\_\_\_\_ 2024թ

Կ.տ